

**Ավանդական Երաժշտության Հայկական
Խորհուրդ**

ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հնագիտական Երաժշտության
ուսումնասիրող խումբ

Էրեն-Խորեղողիայի
ուսումնասիրող խումբ

ԽՄԱՑՅԱԼ ՍԻՄՊՈԶԻՈՒՄ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Դեկտեմբեր 1995

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՐԾ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵջ

ԶԵԿՈՒցումների հիմնադրույթներ



Երևան 1995

ARMENIAN COUNCIL for TRADITIONAL MUSIC

INSTITUTE of ARCHAEOLOGY & ETHNOGRAPHY ARMENIAN NATIONAL ACADEMY of SCIENCES

Study Group for Musical Archaeology
and Musical Iconography

Study Group on Ethno-Choreology
Subgroup on Dance Iconography


Ist Joint Symposium in Yerevan

December 1995

MUSIC AND DANCE ON ICONOGRAPHY



Abstracts



Կազմ կոմիտե՝ Էմմա Պետրոսյան, Ժենյա Խաչատրյան - ՀՀ ԳԱԱ Հնագիտության և
աղքագրության ինստիտուտ, Երևան 1995

Organizational Committee: Emma Petrossian, Genja Khachatrian - RA Armenian National Academy of Sciences, Institute of Archaeology & Ethnography, Yerevan, 1995

ԶՆԱՐԱԿԱԾ ԹԱՍ՝ ՊԱՐՈՒՀՅՈՒ ՊԱՏԿԵՐՈՎ
(ԱՆԻ X-XII ԴԻ.)

Հայկական միջնադարյան պատկեստի հիմնական թեման եղել է կրոնական գաղափարախոսությունը (Քրիստոն, առաքյալներ, աստվածամայր, սրբագործված գործիչներ և այլն):

Կանոնիկ պատկեստին զուգընթաց, նույն այդ շրջանում արտաշխարհում, նաև մեզանում, սկսվել է համապարփակ մի շարժում, որը հայտնի է իբրև քաղաքային կյանքի և աշխարհիկ մտածողության զարգացման շրջան:

Անվիճելիորեն վերածննդի տարրեր պարունակող այդ ժամանակահատվածում, նկարիչներն ու կիրառական բազմանյուղ արվեստ ստեղծող վարպետներն իրենց ստեղծագործություններում վերարտադրել են շրջապատող իրականություններ, մարդու առօրյա կյանքը, կենցաղը, նրա մարմնական բարեմասնությունները, որը և դարձել է գեղարվեստական արտահայտման թեմա:

Այդպիսի մի թեմա է պատկերվել միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիի ջնարակած բասի վրա (Անի 316), որը հայտաբերել է մեծանուն հնագետ Ն. Մառը 1915 թ. միջնաբերդի պալատական շինությունների շրջակայքում կատարած պեղումների ընթացքում:

Անորը նկարագրվել և հրատարակվել է շատ հեղինակների կողմից: Սակայն նրանց տեսադաշտից դուրս է մնացել պատկերի բուն բովանդակության մեկնարանությունը: Մինչդեռ կավանորդի ներսում բաց դեղնա-կանաչավուն ֆոն ունեցող կավի վրա փորագրված կանացի պատկերը եզակի և ինքնատիպ այն օրինակն է, որի քննությամբ հնարավորություն է բնձեռվում լրացնելու մեր պատկերացումները միջնադարյան արվեստի ժանրերից մեկի՝ պարարվեստի մասին:


Հայտնի է, որ միջնադարյան Հայաստանում բատերական զվարենալիքները սկսվել են նախարարական խնջույքներից և խրախնաքններից, որոնք եղել են երգի, պարի, խաղի, առակների, զրոյցների ու վեպերի հորինման, ապա և ավանդման ասպարեզ (տես՝ Հայ ժողովրդի պատմություն, հատ. 2-րդ, 1984թ.): Նախարարներին և իշխաններին զբաղեցրել են ոչ թե սովորական մարդիկ, այլ «արուեստականք» կոչվող գուսաններն ու վարակները:

Թերևս այդպիսի վարձակ պարուիի է և Անիի բասի վրա պատկերված կիմբը: Նրա ձեռքերի շարժումը կենդանի է, մատները արտահայտիչ, հագուստը լայն, թևը ըստեղնագործած թեզներեան: Պարուիու մազերը երկար են, հերարձակ: Այս հանգամանքը անչափ հետաքրքիր է, քանի որ գլխաբացությունը Միջնադարյան Հայաստանում հակառակ է եղել կանացի պատվին, պատմիչները հերարձակ կանանց հիշատակել են մահվան ծիսակատարությունների ժամանակ:

Հիշատակել են նաև բատերական կանանց, որոնց հերարձակ երևալը հասարակության մեջ քննության առարկա է եղել (Թովմա Արծրունի, Մատքեսու Ռունայեցի, Աղանյաց Սիմեոն Եպիսկոպոս և այլն):

Հայոց բատրոնի պատմությանը հայտնի է Մովսես Խորենացու հիշատակած Նազինիկ անոնով վարձակը, որի պարը շլացրել է իշխաններին: Նազինիկի պարը բնորոշվել է «երգեր ձեռամբ» և հավանաբար ունեցել է զգայական բովանդակություն:

Ամեն դեպքում հիշյալ անորի վրա նկուն և նազելի շարժում արտահայտող պարուիու կեցվածքը խոսում է անձի անկախ և ազատ լինելու մասին: Հայտնի չէ, թե որտեղ է ցուցադրում պարուին իր արվեստը: Գուցե բագավորական խրախնաքննում կամ թե միջնադարյան Հայաստանում՝ եկեղեցու կողմից աշխարհիկ խաղերի համար պաշտօնապես ընդունված «Կալենդամսագլուխը» տոնախմբություններում: Ամեն դեպքում պատկերը կրում է իր վրա աշխարհիկ մտածողության կնիքը:



Վերջինս վկայում է XI-XII դդ. աշխարհիկ թեմաների նկատմամբ արվեստագետ վարպետի անթաքույց հետաքրքրության մասին:



Հիլիք Երմակյան
Ա.Ի

ԲԱՐԲԱԴԸ «ՇԱՀՆԱՄԵ»-Ի ԶԵՌԱԳՐԱՅԻՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

Հին և միջնադարյան արևելքի երժշտական մշակույթը լայնորեն արտացոլված է միջնադարյան բանաստեղծների ստեղծագործություններում, որոնց իրենց հերթին պատկերագրել են տարբեր գեղարվեստական դպրոցների մանրանկարիչները:

Ֆիրդուսու «Շահնամե» իր դարաշրջանի երաժշտական արվեստի և գործիքարանի վերաբերյալ հարուստ տեղեկություններ պարունակող հանրագիտարան է (Տ.Վիզգո): Էպոսի պատկերագրդ ձեռագրերը վկայում են, որ երաժշտությունն ուղեկցել է տարբեր պաշտամունքային ծիսակատարությունների, եղել է «Թագմերի» (զինվորական արշավներ), «Թագմերի» (հավաքույթ, խնջույք) և այլ հանդիսավոր արարողությունների մշտական մասնակիցը:

«Շահնամե»-ի սյուժետային մանրանկարներում իր հաստատուն տեղն ունի Արևելքի դասական երաժշտության հիմնադիր Բարբագը, որին գրավոր և բանավոր ավանդություն կիսաառասպեսական պատմություններ է վերագրում:

«Շահնամե»-ի մեջ մատչելի ամենավաղ ձեռագրերում (XIV-XV դդ.) պարունակվող մանրանկարներից երկուսը վերարտադրում են «արքայական» (խորովային) լադերի և պարսկական դասական մեղեդիների հեղինակ Բարբադին վերաբերվող լեզենդ: Լաւ ավանդության, Խոսրով Փարվիզի պալատական երաժիշտները խանգարում էին երիտասարդ երաժիշտ պարսիկ Բարբադին մուտք գործել շահի արքունիք: Սակայն ի վերջո Բարբադին հաջողվում է իր կատարողական արվեստով հիացնել շահին և արքունիքում դառնալ բարձր հեղինակություն: Թեև տվյալ երաժշտական թեման էպոսի տեքստում եփիզոդիկ է, այն խորապես իմաստավորված է Ֆիրդուսու կողմից և պատահական չէ նրա արտացոլումը մանրանկարչության մեջ, ուր այն ստացել է որոշակի պատկերագրային մարմնավորում իմաստաբանական-խորհրդանըշային բանաձևի տեսքով (բաքնված և անսպասելի նվագող երաժիշտ), որ բույլ է տալիս յուրովի մեկնաբանել Բարբադի անվան առնչվող հիշատակությունների շարքը: Խոսքը վերաբերվում է հերոսացվող պատմական դեմքին, նրա առաջինը դառնալու հանգամանքին, որին կրոնա-մշակութային սիրանքի նշանակություն է տրվել, եթե նկատի ունենանք, որ նա դուրս է մղել օտարազգի երաժիշտներին, հաստատելով իր տեղականի գերիշխությունը:

Հերոսի ծպայալ մուտքը և առաջին տեղը գրավելը առասպեսական մտածողության համակարգում վերարտադրվող մոդել է: Առասպելական միֆոլոգիմի առկայու-

Բյամբ է պայմանավորված տվյալ երաժշտական մոտիվի նույնատիպ մեկնաբանումը գրավոր տեքստում և մանրանկարչության մեջ:

Գրական և մանրանկարչական նյութի կառուցվածքային-իմաստաբանական հատկանիշները վերարտադրվել են նաև ավելի ուշ շրջանի ճեռագրային ցուցակներում իբրև կանոնավորված մոդել:



Աղավնի ժամկոչյան ՀԱԻ

ԴՎԻՆԻՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԵՐԱԺԻՇՏԻ ՊԱՏԿԵՐՈՎ ՄԻ ԱՆՈԹԻ ՄԱՍԻՆ

1960 թվականին Դվինից հայտնաբերվել է շողյուն ջնարակով մի անոք, որը հարդարված է ծալապատիկ նստած երաժիշտի պատկերով:

Անոքի նկարազարդման առանձնահատկությունները բնորոշ են IX-X դդ. Մերձավոր Արևելքի երկրներում շատ տարածված զարդամոտիվներին՝ ձված օղակներ կետազարդ գծիկների զուգորդությամբ, ինչպես նաև պարբերով անոքի ներքին մակերեսը հարդարելու սկզբունքին:


Երաժիշտի ճեռքին լարային մի գործիք է, որն իր կառուցողական առանձնահատկություններով՝ հիշեցնում է քյամանչան: Այդ մասին տես՝ Ա. Զիցիկյան, «Հայկական աղեղնային արվեստը» գրքում:

Այդ իմաստով անոքը մեծ կարևորություն է ներկայացնում երաժշտական գործիքների պատմությունը ուսումնասիրելու համար, որովհետև գտածոն ապացուցում է, որ IX դարում, Արևելքում՝ մասնավորապես Հայաստանում աղեղնավոր այլ գործիք-ների թվում ընդունված էր նաև քյամանչան, որը ժամանակի ընթացքում ենթարկվել էր սոսկ չնչին կառուցվածքային ճեղփոխությունների:

Անոքի խեցու որակով և նկարազարդման որոշ առանձնահատկություններով կարելի է ասել, որ այն Դվինի խեցեգործական դպրոցի արտադրանք է: Թեև անոքի

Վրա առկա է արաբական արձանգրության հետքերը, բայց դա, սոսկ, քաղաքի խայտադրելու կազմից և շուկայական պահանջարկից ելնող հանգամանք է:

Դվինը Մերձավոր Արևելքի հախճապակու արտադրության կարևոր և ինքնուրույն կենտրոններից էր ուստի նրա արտադրանքի որոշ նմուշներ արտացոլում էին ժամանակի հայկական կենցաղի բնորոշ առանձնահատկությունները:



ԺԵՆՅԱ ԽԱՀԱՄԹՐՅԱՅԻ
ՀԱՅԻ

ՊԱՐԾ ՎԱՆՈ ԽՈԶԱԲԵԿՅԱՆԻ ՆԿԱՐՆԵՐՈՒՄ

1. XIX դ. 2-րդ կեսին Անդրկովկասի քաղաքներում արհեստների կենտրոնացման ու զարգացման հետ ձևավորվեց արհեստավորական մի շերտ, որի կազմի մեջ մտան տարրեր ազգերի երիտասարդ և միջին տարիքի տղամարդիկ: Այս խավն իր կենցաղով, վարքագծով ու գործունեությամբ խիստ տարբերվում էր հասարակությունից: Նրանք կրում էին սև բրդյա կտորից կարված վերևագգեստ, որը ձևով նման էր չերքեղկա, կապա, չուխա հագուստամասին: Այս հագուստամասի շնորհիվ էլ նրանք անվանվեցին վրացական արտասանությամբ՝ ղարաչոխելի, հայկականով՝ ղարաչուխելի: Տերմինը կազմվել է ղարա - սև չոխա կամ չուխա բառերից սև կապա կրողներ:

2. Ղարչուխելի կոչումը իր մեջ պարունակում էր նաև հատուկ գործունեություն քաղաքների և հատկապես Անդրկովկասի կենտրոն Թիֆլիսի հասարակական ու հոգեւոր կյանքում: Նրանց կողմից ստեղծվեց քաղաքային ֆոլկլորի հատուկ մի տեսակ, որի մեջ իրենց ուրույն տեղն ունեին պարերը: Տարբեր ազգերի ներկայացուցիչները այս տեսակի մեջ մտցրել էին ազգային պարի կատարողական ձևի ու բովանդակության հետ կապված տարրեր, որոնց միացությունից ձևավորվեց պարերի մի շարք: Քաղաքային սագանդարական խավը սկսեց նոր եղանակներ ստեղծել այդ պարերի համար, հորինելով նաև անուններ: Պարաքայլերի նոր որակը, նոր պարեղանակներով պատմության մեջ մտան Կովկասյան կամ Ասիհական պարեր բնորոշմամբ: (պահպանվել էն Շուշիկի, Շուշամբարի, Հեղուշի, Հայկուշի, Շոռոմի, Աշխենի, Կինտառուրի, Լեկտուրի, Լեզգինկա, Շալախո, Խանչալապարի և այլ պարերի անուններ):

3. Այդ ժամանակների ականատես նկարիչ Վահոն Խոչաբեկյանը վարպետ գծանկարներով պատկերել է այդ պարերից մի քանիսը (մոտավորապես 15 նկար), որոնք կարելի են դասակարգել հետևյալ կերպ:

ա) Խնջույքային պարեր, որոնցով ուղեկցվում էին ամենօրյա խրախնանքները և անհրաժեշտ մաս էին դարձել հարասնեկան, տոնական և այլ հավաքների համար:

բ) Պար-մրցույթներ, որոնք կատարվել են պարաքայլերի կատարողական հմտությունը և հարպկությունը ցուցադրելու համար: Հաճախ դրանք որոշակի անձանց կատարման մենաշնորհ էին ստանում և վերանվանվում, պարը վարպետ կատարողի անունով:

գ) Պարեր, որոնք անադարտ կերպով կատարվում էին որպես ծիսական արարողություններ և պահպանում ազգային պարի հատկանիշները:

4. Խոչարեկյանի հարբերում հատուկ ուշադրություն է նվիրվել «Շուշամբարի» և «Նորափեսայի պարը հոր գերեզմանին» պարերին, որոնցից առաջինն իր մեջ պարունակում է սափորով պարերի կատարման բոլոր եղանակները և իմաստը, իսկ երկրորդը՝ գերեզմանապարը, բոլոր տարրերով համապատասխանում է հին հայկական ծիսական արարողությանը և հաստատվում Հայաստանի տարբեր ազգագրական շրջաններում գրանցված պարային նյութերով:

5. Հոր գերեզմանի վրա կատարվող ծիսական պարն ունի ծնունդ-կյանք-մահ և նորից վերածնունդ առասպելաբանական մտածողությունը, որի բազմաթիվ ապացույցները պահպանվել են հայ ժողովրդական պարերի կատարման օրենքների շարժական տեքստի ու ծիսական մտածողության մեջ:Այստեղ նախնին ու ժառանգը իրար հետ փոխադարձ կապի մեջ են մտնում գերեզմանի, այսինքն բացվող ու փակվող անցք-դուն միջոցով:

6. Խոչարեկյանի գծանկար պատկերագրական նյութերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս լուսաբանելու մի առանձնահատուկ ժամանակաշրջանի (XIX-XX դդ.) քաղաքային կյանքին ու ֆոլկլորին վերաբերվող մի շարք հարցեր, որոնք հետագայում իրենց խորը հետքը բողեցին հայ պարարվեստի (հատկապես բեմական) վրա:



Ժորես Խաչատրյան
ՀԱՅԻ

ԱՆՏԻԿ ՇՐՋԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐԵՐԻ ՄԱՍԻՆ
(ԸՍ ԳԱՌՆԻՒԻ ԵՎ ԱՐՏԱՇԱՏԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ)

Հայաստանի հնագույն երաժշտական գործիքների և պարերի մասին գրավոր աղբյուրների տեղեկությունները բավականին կցկուր են, ուստի հնագիտական հայտնագործությունները կարևոր են արվեստի այդ բնագավառների ուսումնասիրության համար:

Գառնիից և Արտաշատից հայտնաբերվել են երեք սրինգ, որոնք պատրաստված են ուկորից և նրանց վրա պահպանվել են 3-4 անցք:

Արտաշատից հայտնաբերված կավե արձանիկների թվում կան նաև երաժիշտների պատկերով՝ արձանիկներ: Մեծ թիվ են կազմում քնարահարների կավե արձանիկները, որոնք երբեմն, ազգային հատկանիշներով օժտված դիմաքանդակներ են: Նրանց գլխի տափակ գլխաշորի ձևով հարդարանքը հայերի կենցաղում պահպանվել են առ այսօր: Հաջորդը՝ փոքր բնով վիճ, ջնար (սազ) նվագող երաժիշտների արձանիկներ են: Գործիքների ընդհանուր գծերով արված պատկերը թույլ չի տալիս որոշել լարերի քանակը: Երրորդը՝ սրինգ նվագող թևավոր պատանու արձանիկներն են, որոնք պատկերում են Ատիսին:

Ուշագրավէ, ձեռքերը գլխի վերևում իրար սեղմած, տղամարդու կավե արձանիկը, որը պատկերված է բուռն շարժման մեջ: Այդ դիրքով պատկերված տղամարդու արձանիկները համարվում են ասիացի պարողներ (սգո պար): Արտաշատի պարող տղամարդու շքեղ տարազը խոսում է նրա քուրմ լինելու մասին, որը կատարում է ծիսական սգո պար:

Երաժիշտները, պարողները, մասնակցում են խնջույքներին, նուղարկավորություններին, թատերական ներկայացումներին, պատերազմներին, պաշտամունքային արարողություններին: Տաճարներն ունեին իրենց երաժիշտները, երգողները և պարողները: Աստվածներին նվիրված ծիսական արարողությունները տարբեր են: Ըստ Լուկիանոսի, Զևսին նվիրված զոհաբերությունները կատարվում են առանց աղոթքի, երգեցողության ու նվագակցության: Հերային նվիրված ծիսակատարությունների ժամանակ երգում են, ֆեյտա նվագում, բոժոժներ շարժում և այլն:

Այսպիսով հնագիտական հայտնագործությունները լրացնում են գրավոր աղբյուրների տեղեկությունները և հարստացնում մեր գիտելիքները Հայաստանի անտիկ շրջանի երաժշտական գործիքների և պարարվեստի մասին: Երաժշտական գործիքներից տարածված են եղել քնարը, սազը, սրինգը, ֆլեյտան, տարբեր տեսակի փողերը, շեփորները, թմբուկը և այլն:



ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՊԱՐԻ ՀԱՄՈՒՅԹԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
(1924-1936)

1924 թ. Երևանում բացվել է պարի առաջին ստուդիան, դեկավար նշանակվել է Թիֆլիսի Օպերայի և բալետի թատրոնի դերասան Վահրամ Արիստակեսյանը: Այդ ստուդիայի հինքի վրա կազմակերպվել է մի ինքնատիպ պարային համույթ, որը գոյատևել է մինչև 1936 թ.: Համույթի մասնակիցների թիվը մոտ 20 էր, նրանց մեծ մասը Արևմտահայաստանից գաղթածներ էին: Համույթի գործունեությունը ընդհատվել է կապված նրա դեկավարի Սիբիր աքսորվելու հետ:

Մեր նպատակն է եղել վերականգնել տվյալ ժամանակաշրջանի պարային մշակույթի պատկերը՝ կապված այն սոցիալ-քաղաքական ազդեցությունների հետ, որոնց ենթարկվել է ազգային պարարվեստը: Խմբի գործունեության մասին սակավ գրականությունը լրացնում է բազմաբնույթ պատկերագրական նյութը: Դրանք լուսանկարներ, համերգային հայտագրեր, ծրագրեր, դիվլումներ ու բացիկներ են: Այս ամբողջ նյութը գտնվում է Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում: Լրացուցիչ տեղեկություններ են հավաքվել նաև ժամանակակիցների անձնական արխիվներից (Վ. Արիստակեսյան, Է. Մանուկյան, Մ. Պարոնիկյան, և այլոք): Խմբի գործունեության վերականգնման ընթացքում հիմնականում օգտագործվել է պատկերագրական նյութը և ժամանակակիցների տված տեղեկությունները (Է. Մանուկյան, Պ. Բուռնազյան և Բ. Օրդյան):

Ըստ պատկերագրական նյութի վերականգնվել է՝

1. Խմբի գործունեությունը 1924-1936 թթ.,
2. Խմբի կատարողական կազմը,
3. Երաժշտական խմբի ճայնակցությունն ու կազմը,
4. Համերգային ծրագիրը,
5. Համերգային գործունեության ընթացքում շահած մրցանակները,
6. Տարագը և պարերի տեխնիկայի ու բնույթի մի շարք հարցեր:

Վ. Արիստակեսյանի դեկավարած ազգագրական պարի համույթի ծրագիրն ու գործունեությունը հետագայում դարձել են ընդօրինակման հիմնական աղյուր՝ հայ ժողովրդական երգի ու պարի մի շարք պրոֆեսիոնալ ու ինքնագործ խմբերի համար:




ԱՐՄԱԹԵ ԹԱՍ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԻ (ՏԱՎԻԴ)
ՊԱՏԿԵՐՈՎ (XII-XIII դդ.)

1. 1925 թ. Անդրուրալի Վիլգորտ գյուղում գտնվել է արծաքե մի բաս (Պետական Էրմիտաժ, 3-809), որը շնորհիվ իրանը հարդարող բազմաբռվանդակ զարդերի, ունի ոչ միայն գեղագիտական, այլև գիտական բացառիկ արժեք, մշտապես գտնվելով ուսումնասիրողների գիտական հետազոտությունների շրջանակում (Հ.Օրբելի, Ա.Բանկ, Բ.Մարշակ, Ա.Կակովկին, Ն.Տոկարսկի, Ն.Հակոբյան և ուրիշներ): Այն ունի հայկական ծագում և հորինվել է հայկական միջավայրում (Կիլիկյան Հայաստան):

2. Թասը լայն պատկերացում է տալիս ժամանակի արծաթագործության, իբրև առանձին արհեստանյուղի զարգացման բարձր մակարդակի վերաբերյալ, և խոսուն վկայություն է միջնադարյան զինարվեստի, կենցաղի, տարագի և վերջապես մեզանում կենցաղավորող երաժշտական հատկապես լարային գործիքների, նվագարանների և երաժշտական հարուստ ավանդույթների մասին:

3. Թասի հատակին ჩիրիխական Դավիթ բագավորն է, կողքին՝ Բերսարեն կամ Մելոդիան: Դավիթ բագավորը ճեռքին ունի տավիղ, գլխին՝ եռագագար բագ, ի նշան բագավորական բարձր իշխանության:

Դվարիթ բագավորը մարդկությանը հայտնի է ոչ միայն որպես իմաստուն և նզոր արքա, այլև բազում հոգևոր երգերի (սաղմոսների) հեղինակ և սքանչելի կատարող (նիմ կտակարան): Նա իր սաղմոսները կատարելու համար կերտել էր երաժշտական հատուկ գործիք, որը պահպանվել է մինչև մեր օրերը և հայտնի է տավիղ անունով: Դավիթյան տավիղն ունեցել է 10 լար: Ճիշտ նույնըն լար ունի և թասի հատակին պատկերված նվագարանը, որը բազում աղերսներ ունի մեր մանրանկարներում տեղ գտած տոնախմբությունների տեսարաններում նվագակցող լարային գործիքների հետ: Սույն փաստը վկայակոչումն է այն պարզ իրողության, թե XII-XIII դդ. հայերը ոչ միայն ծանոթ են եղել Դավիթ բագավորի սաղմոսներին, այլև երգիչ-կատարողներին նվագակցել են նրա կերտած նվագարանի նմանակներով: Թասը թեև եզակի նմուշ է մետաղի մեր հավաքածուներում, բայց ի զորու է հարստացնելու մեր գիտելիքները միջնադարյան երաժշտական գործիքների, մասնավորապես տավիղների հարուստ տեսականու վերաբերյալ:



ԶԱՐԴԱՇԹԱՆԱԿԸ ՊԱՐԻ ԱՆԻԿՈՆԻԿ ՊԱՏԿԵՐ

1. Շրջանով պար ծխական գործողությամբ սահմանազատվում է մի տարածություն՝ «այս» աշխարհի (հուն. *կոսμոս*), տվյալ մշակույթից դուրս մնացած «այն» աշխարհից (հուն. *քառո*):

2. Ծխական պարի այս սահմանազատող դերի կապակցությամբ հետաքրքիր արդյունքների են բերում մի կողմից՝ «պար» հասկացությունը, մյուս կողմից՝ «սահման» և «եզր» իմաստներն արտահայտող բառերի ստուգաբանությունները և որոշակի դիցույթների համեմատությունները:

3. Ծխական զարդանախշավոր շրջանակ ավելի հաճախ հանդիպում ենք ծխական անորների վրա պատկերված դիցաբանական թեմաներով նկարների շուրջը: Այդպիսի շրջանակները չեն կարող ինքնանպատակ եղած լինել. դրանք ավելի շուտ իրենցից պետք է ներկայացնեն պաշտամունքային սրբազն տարածքը սահմանազատելու մի եղանակ, որը պատկերագրության մեջ կլատարէր ծխական պարի դերը:

4. Պարը, լինելով սինկրետիկ պաշտամունքային գործողություն ժամանակի բնբացքում տեղի է տվել ավելի վերացարկված, պարզ պաշտամունքային գործողությունների առաջ (խոսք, երգեցողություն):

5. Մանր նկարներից բաղկացած շրջանակները ևս սահմանազատում են տվյալ նկարի, իրեն տիեզերական կենտրոնի սրբազն դաշտը թե ժամանակի և թե տարածության մեջ, ներկա կերպով կատարելով զարդանաշչ-շրջանակի դեր:

6. Հաճախ նկարում պերսոնաժների մի մասը շրջապատում են գերագույն սրբություն ներկայացնող առարկան: Այդտեղ, առաջին հայացքից, չկա պարային գործընթաց: Պարն այդտեղ հայտածվում է սրբազնագույն առարկան շրջապատողների որոշակի ծխական կեցվածքի, նկարի ներքին դիմամիկայի և այն մանրամասների միջոցով, որոնք որևէ նպատակային արժեք չեն ունենա, եթե չլիներ նկարում սրբագործված տարածք «այս» աշխարհի և սրբագործումից դուրս մնացած «այն» աշխարհի սահմանազատման գիտակցման կամ ընկալման պահը:



Հեղին Հիքման
Գերմանիա, Հանովեր

ԼԱՏԻՆԱ-ԱՄԵՐԻԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԱՍՎԱԾԱՇՆՉԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄՆԵՐՈՒՄ

Հայտնի է, որ Եվրոպացիները լատինական ամերիկան նվաճել են XV-XVI դդ.: Քրիստոնեական քարոզչությունը հնդիկների մեջ, Եվրոպացիների համար եղել է գումինանտային նպատակներից մեկը: Եվրոպացիների համար քարոզչության դերի և նշանակության մասին շատ պատմագիրներ են գրել: Սակայն հնդկական քարոզչության մի քանի հազվագյուտ մեթոդներ կան, որոնց հատուկ քննադատական վերաբերմունք է ցուցաբերվել: Դրանցից մեկը Վաման Պոմա դը Այայի մեթոդն է: Նա Աստվածաշունչը նկարագրադել է պատկերելով երաժիշտների իրենց գործիքներով, պարող, երգողների, համածայն մի կողմից՝ աստվածաշնչային ավանդական մշակույթի, մյուս կողմից մի քանի աշխարհիկ, կենցաղային սովորությունների արտացոլման: Կան նաև քրիստոնեական աշխարհի ավանդներով պատկերված եկեղեցական երաժշտության պատկերներ: Այսպիսով նկարներում լատինա-ամերիկյան ժամանակներից ավանդված հոյակապ պատկերներ կան, որոնք Վաման Պոմայի վաստակն են: Ահա այդ ավանդական աստվածաշնչային ինքնատիպ տարրերի մասին է, որ ուզում ենք խռով այս գեկուցման մեջ:



ՔԱՐԱՇԱՄԲԻ ԳԱՎԱԹԻ ԵՐԱԺԻՇՏԸ ԵՎ ՆՐԱ ՔՆԱՐԸ

Գիտական գրականության մեջ երաժիշտը, ինչպես նաև երաժշտության և բանաստեղծության հովանավոր անտվածությունները դիտարկվում են անդրաշխարհ գնացող ու վերադարձող՝ մենոնոյ ու հարություն առնող աստծու, ծիսական մակարդակում՝ «առաջնազ ոն» կերպարի առասպելույթի համատեքստում։ Հյուսիս-գերմ. Օդին աստվածը բանաստեղծության շնորհին տիրելու համար իրեն զոհում է։ Ապոլոնը փաստորեն զոհ է մատուցում Հերմեսին, որից ստանում է իր քնարը, իսկ նայ աշուղներն իրենց գործիքները գիշերը բողոքում են սուրբ Կարապետի վաճքում, որից և առավոտյան ստանում էն նվագելու շնորհը։ Քարաշամբի գավարի երկրորդ (վերևից) գոտու վրա «արքայից» ծախ պատկերված է յորլարանի քնար նվագող մի երաժիշտ. այն Հայաստանում հայտնի ամենահին երաժշտական բովանդակությամբ պատկերն է (մ.թ.ա. XXI-XIX դր.)։ Երաժիշտը նստած է, ինչպեսև «արքան», իր չափերով հավասար է վերջինիս և շատ ավելի մեծ է, քան մյուս մարդիկ, որը կարող է ակնարկել երաժշտի բարձր կարգավիճակը։ Ինչպես մենք փորձել ենք ցույց տալ Քարաշամբի գավարի պատկերների մեր վերլուծության մեջ, այստեղ պատկերված առասպելը կարելի է կարդալ նաև երաժշտական անալոգիայով՝ որպես բազմաձայն ստեղծագործության պարտիստուր՝ և ծախից աջ, և վերմից ներքև (ինչպես առասպելները վերլուծում է Կ.Լ.Է.ի-Ստրուց)։ Այդ են վկայում տարբեր գոտիների պատկերների համապատասխանությունները։ «Արքայից» ներքև երրորդ գոտում պատկերված առասպելաբանական բոչունը պատերազմի և մահիվան աստծու խորհրդանիշն է, որը ցույց է տալիս, «արքան» հենց այդ աստվածը չէ, ապա նրա երկրային համապատասխանությունն է։ Այդ դեպքում երաժիշտն էլ կարող է ընկալի որպես երաժշտության հովանավոր աստվածություն կամ նրա եպիկական համարժեքը։ Ընդհանրապես գավարի տարբեր գոտիները կարելի է դիտարկել որպես տիեզերքի տարբեր մակարդակներ, առաջինը մեր՝ երկրային աշխահն է, երկրորդը՝ անդրաշխարհը, որտեղ և նստած են անդրշիրիմյան աշխարհի արքան ու երաժիշտը, իսկ երրորդը՝ խորհրդանիշների, բերլս երկնային աշխարհը (երրորդ գոտում պատկերված է արև, երկրորդում՝ լուսին, այսինքն այս գոտիները կարող են հարաբերվել իրար ինչպես գիշերը և ցերեկը, «լույս» և «մուր» աշխարհները)։ Առաջին գոտում պատկերված են որսի վիրավոր վարազը և նրա վրա հարձակվող ընձառյուծ, իսկ երրորդ գոտում՝ գլխատված մարդկային զոհեր։ Սա ցույց է տալիս երաժշտի և նրա գործիքի համադրելիությունը զոհաբերության (առաջնազ ոնի) առասպելույթի հետ՝ անդրաշխարհի երաժշտին համապատասխանում է երկրային որսի վարազը (=զոհ), իսկ խորհրդանշաների մակարդակով՝ գլխատված մարդկային զոհերը։

Աշխատանքներից մեկում փորձել ենք բացահայտել հնդեվրոպական մի առասպել, որը կենդանական մակարդակում կոդավորվում է որպես վարազի և շան հակադրություն։ Այս առասպելի հայկական ուշ արտացոլումներից մեկն է վարազի վերածված Տրդատ արքայի և Գրիգոր Լուսավորչի հակադրությունը, ուր Լուսավորիչն, ըստ Ն.Ադոնցի, համապատասխանում է շների կողմից լիզվելով վերակենդանացող Արա Գեղեցիկին։ Առասպեմերում շանը կարող է փոխարինել առյուծը կամ ընծառյուծը (հմմտ. շումեր. ուր-մախ «մեծ շուն»=«առյուծ»)։ Հայկական ավանդության մեջ վարազը Վահագնի սիմվոլ էր։ Վահագնին քրիստոնեական դարաշրջանում համապատասխանացվել էր սուրբ Կարապետը՝ երաժշտների հովանավորը, որի վանքը կառուցվել էր Վահագնի տաճարի տեղում։ Սուրբ Կարապետը՝ Հովհաննես Մկրտիչն ըստ քրիստոնեական ավանդության գլխատվում է։ Այսպիսով, գավարի ն.թ. Խ. դ. երաժշտի և նրա գործիքի պատկերները կարող են բացատրվել սուրբ Կարապետ-Վահագնի հայկական առասպելույթի տվյալներով։

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՎ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ ՈՒՈԼՏԵՐ ԱՐՎԵՍՏԻ
ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀՈՒՄ ՊԱՀՊԱՆՎԱԾ ՀԱՅ ԶԵՐԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱՌԱՇՈՒՈՒՄ

Ուղարք Արվեստի պատկերասրահը գտնվում է ԱՄՆ-ի Բալտիմօր քաղաքում։ Նրա գրադարանի հավաքածուում պահպանված է 11 հայ միջնադարյան ձեռագիր, որոնք թվագրվում են XIII-XVII դդ.։ Ձեռագրերի մանրանակարների ուսումնասիրությունը բերեց այն եզրակացության, որ նրանցից 7-ում հնարավոր է առանձնացնել 27 տվյալ, միջնադարյան թատերական և երաժշտական կյանքի վերաբերյալ։ Այդ ձեռագրերի մանրանկարները կարելի է դասակարգել հետևյալ կերպ։


1. Դիմակներով պարողներ, որոնք կրում են արծի, այծի, եղի, շան դիմակներ։ Բոլորը գտնվում են խորանի երկրորդ բեմահարթակում։

2. Կրկեսային ներկայացումներ. նկարված են վարժեցրած կապիկներ, մարդիկ կապիկի զգեստավորումով, արշեր, բոլորը նստած ուղղահայաց դիրքով։ Կապիկները և զգեստավորված մարդիկ կրում են կարմիր զոլող՝ ձեռքներին վառված մոմ։ Արշերի վզից կախված է զանգը, կիսաբաց բարերը մեկնած են առաջ։ Այստեղ ևս կենդանիները գտնվում են խորանի երկրորդ բեմահարթակում։

Մանրանկարները ոչ մի կապ չունեն ձեռագրերի բովանդակության հետ, գտնվում են ձեռագրերի ակզրում։ Ֆողովրդական բատրոնի ուսումնասիրությունը և դաշտային աշխատանքները ցույց են տալիս վերևում բերված կերպարների կապը թատերական կյանքի հետ։ Ես ենթադրում եմ, որ պատկերված են տեսարաններ հայ միջնադարյան ծիսական և աշխարհիկ թատրոնից։ Այս կերպարների ակունքները գալիս են հեթանոսական շրջանից։

3. Երաժշտական գործիքներից հանդիպում են սրինգ, զուռնա, տարբեր տեսակի փողեր, ծիսական զանգակներ և բուժութեր։ Բոլոր երաժշտական գործիքները պատկերված են աստվածաշնչի (հին և նոր կտուկարան) տարբեր ձեռագրերում և ունեն ֆունկցիոնալ նշանակություն։ Մանրանկարների այուժեներն են՝ ծնունդ, հարսանիք կանայում, Հովիվ, Անեղ դատաստան, Դիխուս, ըստ Մաքենոսի ավետարանի առաջին եջում հիշշտակները քշողով։

Այս բոլոր նվագարանները կիրառման մեջ են և՝ կենցաղում, և՝ եկեղեցական բարունում։ Պատկերագրական տվյալները հնարավորություն են տալիս վերականգնել միջնադարյան մշակութային կյանքը Հայաստանում։



ՊԱՆԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՔԱՐԵ ՍՐԻՆԳԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Երաժշտական գործիքների և նրանց պատկերների հնագիտական գտածոները Հայաստանում, որպես կանոն, ծննդայիլ են նրա երաժշտական մշակույթի հնություններ լուսաբանելու նպատակին: Այդ առումով «Դրասխանակերտ» դաստակերտի գտածոն Պանի սրինգը ներկայացնում է հետագոտությունների մի նոր փուլ երաժշտական մշակույթում:

«Դրասխանակերտ» դաստակերտը գտնվում է Գյումրիից (նախկինում՝ Լենինական) հարավ՝ 10 կմ վրա: Հնագիտական հետազոտությունները դաստակերտում սկսվել են դեռևս 1989 թ.: Դրանք իրականացվում են Հայաստանի Գիտությունների Ազգային ակադեմիայի Հնագիտառության և ազգագրության հնատիտուտի կողմից Գյումրիի գավառագիտական բանգարանի հետ համատեղ: 1992 թ. կենտրոնական բրիդ պալատա-պաշտամունքային համալիրի սենյակներից մեկի պեղման ժամանակ հայտնաբերվեց խիտ կրաքարից սեղանակերպ մի քարե սալիկ: Զնայած սալիկը վնասվել էր դեռ հնում, նրա չափերը վերականգնված են: Սալիկի բարձրությունը կազմում է 80 մմ: Վերին վնասված մասի լայնությունը կազմում է մոտավորապես 75 մմ, ներքևի մասինը՝ 58 մմ: Սալիկի վերին մասում հաստությունը 13 մմ է, իսկ ներքևում՝ 5 մմ: Սալիկի լայն հարթությունները ունեն եռանկյուն զարդաքանդակով ցածրիկ մակերևութապատկեր, որը տեղակայված է բարձրությամբ՝ 3 շարքով:

Սալիկի վերին, լայնացող մասը մշակված է և ունի նեղ հարթատեղի տեսք: Նրա մեջտեղում՝ սալիկի իրանի բարձրության երկայնքով, բացված են չորս անցք՝ 6-7 մմ տրամագծով, այսպիսով գոյացնելով փոսիկներ: Կենտրոնական փոսիկները համապատասխանաբար ունեն 61 մմ և 57,4 մմ երկարություն: Զնայած երկու եզրային փոսիկների վնասված լինելուն, վերջիններիս վերականգնելի երկարությունը հավասար է մոտավորապես 54 մմ և 46,6 մմ-ի:

Ի դեմս այդ սալիկի կարելի է տեսնել երաժշտական՝ Պանի սրինգի տիպի, լաբվիալ բնույթի փողային գործիք:

Փշելով պարագայում գործիքի կենտրոնական փողիկներն արձակում են մաքուր տոնայնության «մի» և «ֆա» նոտաները: Այստեղից, օգտվելով երաժշտական գործիքների պատրաստման և լարելու առկա մերոդարանությունից, կարելի է որոշել մյուս երկու փողիկների հնչողությունը:

Ելնելով երկու կենտրոնական փողիկների երկարությունների տարբերությունից, կարելի է ասել, որ գործիքի ստեղծման ժամանակ փողիկները հաշորդաբար երկարացվել են 1/14-ով, հավասարատիպ կիսատոներ ստանալու համար: Երաժշտության տեսաբանների կողմից սրինգի հետագա ուսումնասիրումը կօգնի նշտելու հիմնայկան երաժշտական լադի և տոնայնության մասին առկա գիտելիքները:

Ելնելով հնագիտական և երաժշտական գրականությունից, ասենք, որ այլ ժողովուրդների մշակույթներում մեզ չեն հանդիպում փողային քարե գործիքների օրինակներ: Զնայած նրան, որ դիտարկվող Պանի սրինգը հայտնաբերվել է մշակութային մի շերտում, որը բավարպում է V-IV դդ. մ.թ.ա., կասկածից վեր է, որ երաժշտական գործիքը իր ձևով ծագում է Պանի սրինգի հնադարյան նմուշներից: Հնադարյան ծագման մասին է վկայում նաև եռանկյուն զարդաքանդակը, որը բնութագրական է ուշ բրոնզի դարի ծիսական հարսանիքներին և զանգուլակներին: Զարդաքանդակի եռանկյունների տեղակայումը ուղղի շարքերով գուգակցվում է սեպագրի հետ: Հնարավոր է, որ սրինգի տվյալ ձևը ունեցել է իր կավե նախատիպերը: Գործիքի քարե նմուշները, հնարավոր է, գործածվել են ծիսական արարողություններում, որն էլ նպաստել է նրա հնադարյան ձևի ամրապնդմանը: Հայաստանի մշակույթում քար-

սրինգների օգտագործման տևականության մասին է վկայում հելլենական ժամանակաշրջանի մեկ այլ հուշարձանում հայտնաբերված երկփողանի քարե սրինգը:

Սրինգների ուսումնասիրումը հնարավորություն է ընձեռնում նաև մի շարք ենթադրություններ անել փողային գործիքների համույթների կազմակերպման բնույթի մասին:



Համլետ Պետրոսյան
ՀԱԻ
Հոհիսիմն Պիկիչյան
ԱԻ

ԵՐԱԺԻՇՏԸ ԵՎ ԽՆՁՈՒՅՔԸ
(ըստ XVI-XVIII դդ. տապանաքարային պատկերաքանդակների)

1. Հայաստանի XVI-XVIII դդ. ուղղանկյուն-զուգահեռանիստ տապանաքարերի մի կողմը սովորաբար պատվում է պատկերաքանդակներով, որոնք հանգուցյալին ներկայացնում են իդեալական կերպավորումով և իդեալական միջավայրում: Տապանաքարային պատկերաքանդակներում զգալի տեղ է հատկացվում նաև ավանդական նվազարաններին և երաժիշտներին: Նվազարանները մեծավ մասամբ պատկերվում են նվազելու պահին, և միայն եզակի դեպքերում, դրանք հանդես են գալիս առանց երաժշտի: Հատկապես տարածված են տարբեր տիպերի ազերը, քամանչան (կամ քեմանին), բանոնը, բազմաբնույթ փողերը, սրինգը, զուռնան և դափի: Երբեմն պատկերվում է նաև եկեղեցական քշոցը: Երաժիշտները հանդես են գալիս միայնակ կամ խմբերով, ինչը հնարավորություն է տալիս որոշակի պատկերացում կազմել ժամանակի երաժշտախմբերի կազմի մասին:

Առկա նյութի հիման վրա կարելի է առանձնացնել երաժշտի երեք հիմնական կերպավորում:

- ա) երաժիշտը, որպես «հավերժ խնջույքի» մասնակից,
- բ) հանգուցյալը, որպես արքա-երաժշտ,
- գ) բարի հովիվը:

2. Խնջույքը, կապված մահի հաղբահարելու ժողովրդական պատկերացումների հետ, այս պատկերաբանդակների հիմնական թեման է: Անկախ հանգուցյալի «անհատական» կերպավորումից (սոցիալական, մասնագիտական, ընտանեկան և այլն), նա նախ և առաջ պատկերվում է որպես «քեֆ անող»: Այս հիմնարար պատկերացումը ներկայացվում է հանգուցյալին ուղեկցող հետևյալ բաղկացուցիչների ներմուծմամբ (քերպում են՝ ըստ հանդիպման հաճախականության). ա) սափոր և գավար, բ) սեղան-մատուցարան, գ) երաժիշտ, դ) մատուցողներ, ե) պարողներ, զ) այլ մասնակիցներ:

3. Խնջույքի տեսարանում պատկերվող միայնակ երաժշտները, առանց բացառության, նվազում են սազատիպ լարային նվազարաններ այսինքն, դրանք երգասաց երաժշտներ են: Նվագախմբի դեպքում, ավելանում են նաև քամանչան, քանոնը և դափը: Ավանդական սազանդարային նվագախմբերի օրինակով կարելի է ենթադրել, որ այս դեպքում արդեն, դափանարձ է դառնում երգասաց: Երաժշտերգասացի նման կերպավորումը հնարավորություն է տալիս լայն զուգահեռներ անց կացնել միշնադարյան «հավերժ խնջույքի» ֆենոմենի հետ, որտեղ նույնպես իդեալական երաժշտ է համարվում գուսանը, որի կերպարում միահյուսվում են մեղեդին և խոսքը:

Աշոտ Փիլիպոսյան
ՀԱԻ
Հասմիկ Քամալյան
ԵՊԹ


**ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱԾԽԱՐՀԻ Մ.Բ.Ա. III-I ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐԻ
ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ՀԻՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ
ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐԸ**

1. Հայկական լեռնաշխարհի և հարակից շրջանների մ.թ.ա. III-I հազարամյակների հարուստ հնագիտական գտածններում հնարավոր է առանձնացնել արտեֆակտների մի ուշագրավ ընտանիք, որի մեջ մտնող նյութերի մի մասն անմիշականորեն կապվում են հնում կիրառված երաժշտական գործիքների հետ, իսկ մյուս մասն՝ ուշագրավ տեղեկություններ է պարունակում դրանց ձևի, կառուցվածքի, կիրառման մահրամասների ու նշանակության վերաբերյալ: Այս առումով տեղում օգտագործված երաժշտական գործիքները կարելի է բաժանել երեք խմբի:

- ա) լարային կամիբավոր նվազարաններ,
- բ) փողային լեզվակավոր նվազարաններ,
- զ) հարվածային նվազարաններ:

2. Լարային կամիբավոր նվազարաններից Հայկական լեռնաշխարհում կիրառվել են քնարը և տավիղը (ջնար, վիճ): Քնարի առ այսօր հայտնի ամենավաղ պատկերը պահպանվել է Քարաշամբի դամբարանաբլրի (մ.թ.ա. XXI-XIX դդ.) պեղումներից հայտնաբերված արծաթի գավարի դրվագազարդ տեսարանում (աղ.1, նկ.1): Այն սեղանած արկղիկ հիշեցնող հիմք-ուղղոնատորով, աղեղնած վերնամասով և 7 լարերով մի հարմարանք է, որը՝ դատելով երաժշտի և նվազարանի չափերի մասշտարային բաղդատումից, ունեցել է 60-65 սմ բարձրություն, 30-35 սմ հիմք և 50-55 սմ փոփածքով վերնամաս:

Քնարի մեկ այլ փորագիր պատկեր պահպանվել է Խանլարից հայտնաբերված և մ.թ.ա. II հազարամյակի 2-րդ քառորդով բվագրվող, սև փայլեցրած կավե կոշկան անորի վրա (Վիեննայի Բնապատմական թանգարան, հ.83226): Այն աղեղնած իրան ունի, սեղանած հիմք-ուղղոնատոր և սինմատիկ պատկերված մեկ լար (աղ.1, նկ.2): Հին Արևելյան նման քնարները լավ հայտնի են Միջագետքի (Ուր, Ուսիյե, Բաքելոն),




Իրանական սարահարքի (Շոշ) և Փոքր Ասիայի (Խզմիր) հնագիտական համալիրներից և թվագրվում են մ.թ.ա. IV-II հազարամյակներով։ Տափիդի հետ առնչվող միակ գտածոն հայտնաբերվել է Լեաշենի հ.200 դամբարանից և թվագրվում է մ.թ.ա. XV-XIV դդ.։ Այն 15 սմ բարձրությամբ, 16 սմ լայնությունով և 39 սմ երկարությամբ կավե ուղղանկյուն արկղիկ է, կողային նիստերում կիսակլոր և ձվաձև կտրտ ծրբներով, իսկ վերին և ստորին նիստերին մոտ 2 տասնյակ նեղ միջանցիկ անցքերով։ Խացառված չէ, որ արկղիկը ուղղանատորի դեր է կատարել, իսկ նրա 14 միջանցիկ անցքերով անցնող լարերն ամրացվել են արկղիկ-ուղղանատորի ձվաձև կտրվածքների մեջ հագցված և աղեղնաձև բարձրացող վերնամասի վրա։ Նման նվազարաններ հանդիպում են միջնադարի (Ուր, Ուսիյե), Սիրիո-Պաղեստինյան աշխարհի (Թել Քուերա, Թել Աշանա), Իրանական սարահարքի (Շոշ, Չողա Միշ) և Եգիպտոսի (Ռամզես III դամբարան, Ախեթարոն) հնագիտական համալիրներից և թվագրվում է մ.թ.ա. IV-II հազարամյակներով։


3. Փողային նվազարանի ամենավաղ օրինակները դարձյալ պատկերված են Քարաշամբի արծարե գավարքի վրա։ Դրանք պարկապագուկի նման ինչ-որ երաժշտական գործիք են հիշեցնում, ունեցել են խողովակավոր, վերնամասում շեփորած լայնացող իրան և օգտագործվել են նստած վիճակում։ Նրանց ամենամոտ զուգահեռը պահպանվել է Չողա Միշից (Իրան) հայտնաբերված գլանաձև կնիքի արտադրանքում վրա և վերաբերվում է մ.թ.ա. IV հազարամյակին։ Նույն իմբին են վերաբերվում նաև Մինգեչառուրից հայտնաբերված և մ.թ.ա. II հազարամյակի կեսերով թվագրվող ուլորե 3 փողային գործիքները, որոնք, ըստ մասնագետների, բրոնզեդարյան «Փլեյտաններ» են հանդիսացել։ Նման նվազարաններ պատկերված են նաև Փոքր Ասիայից (Բողազքյոյ) և Միջագետքից (Բարելոն) հայտնաբերված հնագիտական նյութերի վրա։ Մեր կարծիքով այս նվազարանները կարելի է համեմատել նաև Դանիայի ուշբրոնզեդարյան հուշարձաններից հայտնաբերված «լուր» կոչվող փողային նվազարանների հետ։

4. Հարվածային նվազարաններից Հայկական լեռնաշխարհում առաջիմ հայտնի են միայն բրոնզե ծննդղանները։ Դրանք վերաբերվում են Վանի թագավորությանը, հայտնաբերվել են Կարմիր բլուրից և թվագրվում են մ.թ.ա. VII դ.։ Ըստ ամենայնի, հարվածային նվազարանների դեր են կատարել նաև բրոնզե ցանցկեն, գնդիկավոր բոժոքները, որ լավ հայտնի են Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. II հազարամյակի հնագիտական հուշարձաններից (Լեաշեն, Արթիկ, Մեծամոր, Լոռի Բերդ, Օշական, Շիրակավան, Շամիրամ, Քեթի և այլն)։

5. Բերված տվյալները վկայում են, որ մ.թ.ա. III հազարամյակի վերջերից արդեն Հայկական լեռնաշխարհում ծանօթ են եղել տարբեր երաժշտական նվազարանների հետ և դատելով հիմն արևելյան բարձրաքանդակների, կնքադրոշմների և որմնանկարների տեսարաններից, դրանք օգտագործվել են տոնախմբությունների, թաղման արարողությունների ժամանակ։



1



-



2

ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐԻ ՎՐԱ ՊԱՏԿԵՐՎԱԾ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐԸ

1. Հարվածային, փողային, լարային երաժշտական գործիքներ հաճախ են պատահում Սևանա լին Հարավ Արևելյան կողմերի ուշ միջնադարյան գերեզմանատների տապանաքարերի վրա՝ հատկապես որսի, խնջույքի, հարսանյաց տեսարաններ պատկերող բարձրաքանդակներում:
2. Քանդակագործները գործիքները պատկերել են ոչ միայն ստատիկ վիճակում, այլև կիրառության մեջ՝ նվազողի ձեռքին, կարծես ցույց տալով երաժշտական կատարողական պահը: Գործիքները քանդակված են ոճավորված և կամ իրական որոշակիությամբ: Քիչ չեն այն օրինակները, որոնք բույլ են տալիս հստակությամբ նկատել գործիքի կառուցվծքային մանրամասները, լարերի քանակը:
3. Տապանաքարերի վրա քանդակված նվազարանների հարուստ բազմազանությունը անկասկած է դարձնում ավելի լայն և ընդգրկուն ուսումնասիրման անհրաժեշտությունը: Սակայն մեր այս նախնական ծանոթությունն էլ բույլ է տալիս նկատել, որ տվյալ միջավայրի ու ժամանակաշրջանի երաժշտական արվեստը Մերձավոր Արևելքի չափանիշներով գտնվում էր բարձր մակարդակի վրա:

Manook Manookian

IA

MUSICAL INSTRUMENTS ON THE FUNERAL STONES

1. Percussion, wind, stringed instruments are often sculpted on the funeral stones of the late medieval cemeteries on the south-eastern shore of lake Sevan: more frequently hunting, feast and wedding scenes are depicted.
2. The sculptors were able to show instruments in their usage. Fine carving on many of the tombstones made possible to see how many strings the instruments have.
3. This first attempt to study the material allows to make conclusions about the high level of musical art in that times.

Frina Babayan

IAE

THE GLAZED BOWL DEPICTED WITH A DANCERS IMAGE

The principle theme of the medieval Armenian art was religious ideology (Christ, the Virgin, saints, prophets, etc.). Besides this canonical art through the world as well as in Armenia began a movement, which was famous for the development of urban life and a period of secular understanding.

That period, no doubt, bore the elements of renaissance and the artists as well as authors of the applied arts in their works depicted the live world around them: people's daily life and mode of life, women's charm etc. This theme was interpreted in an especial artistic form.

